ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉԻՍԱՐ ԳՅՈՒՂԻ ՀԵՐՈՍԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ*

Խաչիսարը (Չարդախլու, Չարդակլու, Չարդախլի, Չարտախլու, ռուս.՝ Чардахлы, *թրք.՝* Çardaqlı*) հինավուրց, բազմադարյա մշակույթ ունեցող հայկական գյուղ է, որը ներկայումս գտնվում է Ադրբեջանում՝ Շամխոր քաղաքից 22 կմ դեպի հարավ-արեւմուտք՝ չորս կողմերից լեռներով շրջափակված գոգավորությունում (ժողովրդական ստուգաբանությամբ՝* «չորս լեռների միջեւ ընկած բնակավայր»*): Գյուղի՝ դարավոր տարեգրություն ունենալու մասին վկայում են բազմաթիվ հուշարձանները՝ բերդերի մնացորդները, խաչքարերը, կիկլոպյան տարբեր կառույցները, տապանաքարերը, մատուռները, եկեղեցին, Վահրամ իշխանի՝ Շամխորի եւ Ղալաբոյունիի ԺԳ.–ԺԴ. դարերի բերդերը[1]: Գյուղը նախկինում գտնվել է Խաչասար լեռան արեւելյան լանջին, այնուհետեւ աստիճանաբար տարածվել եւ գրավել է նաեւ արեւմտյան լանջը: Այն ընկած է Զագիր գետի ափին (այժմյան Ադրբեջանի Հանրապետության Շամխորի շրջան)՝ պատմական Գարդմանաց (Ուտիք) գավառի Գանձակ քաղաքից ոչ հեռու՝ Շամխոր-Գետաբեկ մայրուղու վրա: Հնամենի այս գյուղը դարերի ընթացքում եղել է շրջակա հայաբնակ 15-ից ավելի գյուղերի հենարանն ու անվտանգության երաշխավորը, հայ մարտական ոգին եւ խորհրդանիշը:*

*Ըստ 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի մասնակից գեներալ-լեյտենանտ Մ. Ա. Կոցեբուի տեղեկությունների, որոնք շրջանառվել են ադրբեջանցի պատմաբան Ի. Մ. Մամեդովի ուսումնասիրությամբ (*նա եւս խաչիսարը հայկական գյուղ է համարում*)՝ գյուղը 1826 թ. ունեցել է 113 տուն, 738 բնակիչ, որից 387-ը՝ տղամարդ, 351-ը՝ կին[2]: Իսկ արդեն*

---

* *Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ թեմատիկ (18*T*–6*A*068 «Հայկական զինուժը 1914–1920 թթ.») շրջանակում:*

[1] *Տե՛ս* Մակար եպս. Բարխուտարեանց, *Արցախ, Երեւան, 2018, էջ 19, 208, 222, 326–327, 436 եւ այլն:*

[2] *Տե՛ս* И. Мамедова, «Статистические описания Шамшадильской и Казахской дистанции» как источник для изучения истории населения Закавказья (первая треть XIX ст.)*, էջ 109–110.* www.

հայկական աղբյուրների, մասնավորապես՝ վաստակավոր պատմաբաններ Ստ. Մելիք-Բախշյանի եւ Թ. Հակոբյանի բերած փաստերի համաձայն՝ 1907 թ. գյուղն ուներ 1863, իսկ 1975 թ.՝ 4000 բնակիչ, որոնք զբաղվում էին հացահատիկի մշակությամբ, այգեգործությամբ, ինչպես նաեւ անասնապահությամբ[3]։

1905—1906 թթ. Խաչիսարը Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլ գավառի կազմում էր, երբ հրահրվեցին հայ-թաթարական կռիվները։ Ըստ ավանդության՝ Խաչասար լեռան վրա եղել է մի մեծ զանգ, որով շրջակա բնակիչներին նախազգուշացրել են թշնամիների հարձակումների մասին։ 1902—1903 թթ. ահաբեկչությունից եւ հայերի ունեցվածքի վերադարձից հետո, ինչպես նշել է Ալ. Խատիսյանը 1924 թ. Բեռլինում Ի. Վ. Հեսսենի հրատարակվող «Архива русской революции»*-ի համար պատրաստված, սակայն չտպագրված ձեռագրում,* «ռուսական վարչակարգի մութ ուժերի կողմից հայ-թաթարական ջարդեր կազմակերպվեցին, որում հայկական ինքնապաշտպանությունը փրկարար դեր կատարեց»[4]. *այս խարդավալից մթնոլորտի մեջ ներքաշվեցին Գանձակի ողջ գավառը եւ հայկական Խաչիսարը՝ շրջակա բազմաթիվ գյուղերի հետ միասին։*

Խաչիսարի հայերը 1905—1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ աչքի ընկան իրենց բացառիկ քաջությամբ եւ մարտական աննկուն ոգով՝ չնայած գյուղի ռազմավարական առումով անհարմար աշխարհագրական-տեղագրական դիրքին (Հայի Գետաբեկ (Գետաբակ), Կրզեն, Սարով, Ղարադաղլու եւ Բադաքենդ գյուղերը հենակետային ավելի լավ դիրքեր ունեին)։

Գյուղը մշտապես եղել է թուրքական հարձակումների գլխավոր թիրախը, քանզի կոտրելով Խաչիսարի դիմադրությունը՝ թշնամուն, ամենայն հավանականությամբ, կհաջողվեր ճնշել երկրամասի մնացյալ

---

irbis-nbuv.gov.ua >cgiirbis_64. *Նաեւ՝* http://www.irbis-nbuv.gov.ua/cgi-bin/irbis_nbuv/cgiirbis_64.exe ?I21DBN=LINK&P21DBN=UJRN&Z21ID=&S21REF=10&S21CNR=20&S21STN=1&S21FMT%20 =ASP_meta&C21COM=S&2_S21P03=FILA=&2_S21STR=Skhodoz.2012.59.10. *բեռնման օրը՝ 07.06.2020 թ.։*

[3] *Տես* Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3, Երեւան, 1991, էջ 220։*

[4] *Տես* К. Амбарцумян, Русская Революция и образование Республики Армения на Кавказе (1917—1918 гг.), А. И. Хатисова, Публикации и переводы, «Диалог со временем» (Институт всеобщей истории РАН, Центр интеллектуальной истории, Российское общество интеллектуальной истории), М.: ИВИ, 2017, №60, *էջ 369. Նաեւ՝* ww.academia. edu/38722700/ К._Р._АМБАРЦУМЯН_ Хатисов _А. И._ Русская_революция_и_образование_Республики_Армении. *Ներբեռնման օրը՝ 31.05.2020 թ.։*

բնակավայրերի ինքնապաշտպանությունը։ Դա ցայտուն արտահայտվեց ցարիզմի 1905–1906 թթ. հրահրած հայ-թաթարական բախումների ժամանակ. ադրբեջանցի պատմաբան Ս. Ալիեւան ցարական իշխանությունների հետ միասին «հայկական ազգայնական» ՀՅԴ կուսակցությանը եւս մեղսակից է համարում, ինչը ադրբեջանական քարոզչության հերթական ստահոդ պնդումներից է[5]։ 1905 թ. նոյեմբերի 18-ին թուրքական զորուժը պաշարում է Խաչիսարը, Բաղան, Գետաբեկի շրջանը, պղնձաձուլական գործարանն ու մերձակա Ղազախ գյուղը՝ վստահ լինելով, որ այդ մարտավարությամբ կշրջափակի նշյալ գյուղերը, միմյանց օգնելու հնարավորություն չի թողնի եւ այդպիսով կճնշի նրանց դիմադրությունը։ Այս նպատակին հասնելու համար, ըստ Հ. Գեւորգյանի, թուրքերը հատուկ խմբերի միջոցով հետախուզություն են իրականացնում՝ իրենց դիմադրող գյուղերի տեղանքի հետ կապված մանրամասները, ինչպես նաեւ մարտական ուժերի քանակն ու հնարավորությունները պարզելու համար։ Եւ քանի որ Շամխորի շրջանի այդ գյուղերից ամենաուժեղը, հետեւաբար՝ թուրքերի համար ամենավտանգավորը Խաչիսարն էր, ուստի նրանք որոշում են իրենց հիմնական ուժերով չորս կողմից հարձակվել վերջինիս վրա եւ այն իսպառ ոչնչացնելուց ու թալանելուց հետո միայն հարվածը կենտրոնացնել Գետաբեկի, այնտեղ գտնվող գործարանի եւ Ղազախի ուղղությամբ[6]։ Սակայն գյուղի պաշտպանները ոչ միայն չեն ընկճվում, այլեւ ընդունում են հակառակորդի նենգ մարտահրավերը՝ ըստ այդմ ընտրելով ճիշտ ռազմավարություն. հայ մարտիկները մինչեւ վերջ համբերատար սպասում են, որ թուրքերը մոտենան իրենց դիրքերին, եւ միայն դրանից հետո վճռական հակահարված են տալիս թշնամուն։ Թուրքերը, զոհեր տալով, ետ են քաշվում եւ փախչում՝ անակնկալի գալով հայերի այդ համարձակ քայլից[7]։

Թուրքերը, համալրելով իրենց ուժերը, հաջորդ օրը՝ նոյեմբերի 19-ին, վերսկսում են իրենց հարձակումը. չնայած դրան՝ Խաչիսարի պաշտպանները դարձյալ կարողանում են ամուր ինքնապաշտպանություն կազմակերպել եւ հաջողությամբ ետ մղել հակառակորդի բոլոր հարձակումներն

---

[5] *Տե՛ս* С. Алиева, Азербайджан и народы северного Кавказа (XVIII — начало XXI вв.). *Բաքու,* “Şərq-Qərb”, *2010, էջ 292։*

[6] *Տե՛ս* Հ. Գեւորգյան, *Ազատագրական պայքարի Կովկասյան ճակատը, Երեւան, 2010, էջ 277։*

[7] *Տե՛ս* Հ. Գեւորգյան, *նշվ. աշխ., էջ 277։*

ու սադրիչ ձեռնարկումները[8]։ Այսպիսով, հայերը կարողանում են ձախողել հայկական Խաչիսարը զավթելու թուրքական փորձերը, որից հետո թշնամու հարձակումներն առժամանակ դադարում են։

Բաղաքենդ ու Ղազախ գյուղերի գրավումից եւ ավազակային թալանից ոգեւորված թուրքերը, վստահ լինելով, որ այս անգամ իրենց կհաջողվի ընկճել չարդախլվեցիներին, նոյեմբերի 25-ին նոր հարձակում են ծրագրում եւ կրկին պաշարում Խաչիսարը, որը Գանձակի գավառի արեւմտյան մասի ամենամեծ ու շեն գյուղն էր՝ հարուստ մարտական ավանդույթներով։ Չնայած թուրքերը հասկանում էին, որ գործ ունեն առավել կազմակերպված մարտական ներուժ եւ փորձ ունեցող հայկական գյուղի հետ, սակայն մի քանի գրոհ են ձեռնարկում, որոնք դարձյալ ավարտվում են պարտությամբ։ Եւ երբ նոյեմբերի 29-ին Խաչիսար է հասնում Գանձակի ինքնապաշտպանական մարտերում իր անձնուրացությամբ ու խիզախությամբ աչքի ընկած եւ հայ բնակչության շրջանում մեծ հեղինակություն վայելող խմբապետ, բուլանըքցի վարժապետ Մարտիրոս Պետրոսյանցի գլխավորած զինյալ հայդուկախումբը[9], թուրքերը որոշ ժամանակ դադարեցնում են իրենց ավազակաբարո հարձակումները՝ մտադրվելով համալրումներ ստանալ եւ հնարավորության դեպքում վերսկսել իրենց թալանչիական նպատակներ հետապնդող գործողությունները։

Նոյեմբերի 30-ին տեղի է ունենում հայկական Խաչիսարի վրա թուրքական գլխավոր հարձակումը, որը, սակայն, վճռաբար ետ է մղվում։ Այդ օրերի իրադարձությունների տարեգիր Ա-Դոն գրում է. «...նորից թուրֆ խուժանը դարձաւ դէպի Զարդախլու։ Նոյեմբերի 25-ից սկսած մինչեւ 30-ը պարբերաբար յետ մղուելով եւ նորանոր թարմացած ուժերով նոր յարձակումներ գործելով՝ նա չը յոգնեց.... Նոյեմբերի 30-ին տեղի ունեցաւ վճռական յարձակումը, եւ այս անգամ խուժանը յետ փախաւ մեծ կորուստներով։ Հայերից սպանուեց այդ կուռում մի հոգի, բայց լաւ հոգի. դա չարդախլուեցի Շահէնն էր»[10]։

Չնայած պատմաբան Հ. Գեւորգյանը նշում է, որ վճռական ճակատամարտը տեղի է ունեցել նոյեմբերի 23-ին, իսկ Ա-Դոն՝ նոյեմբերի 30-ին,

---

[8] *Տե՛ս անդ, էջ 277–278։*

[9] *Մարտիրոս Ստեփանյան-Պետրոսյանց՝ ծնվել է Արեւմտյան Հայաստանի Տարոն աշխարհի Բուլանըք գավառի Եռնջալա գյուղում։ Դեռեւս 1891 թ. զինվորագրվել է Հայոց ազատամարտին եւ հայդուկային խմբերի կազմում մասնակցել մի շարք կռիվների ընդդեմ թուրքական բռնապետության, իսկ 1904 թ.՝ Կովկաս վերադառնալուց հետո, իր լուման է ներդրել Գանձակի նահանգի հայ ինքնապաշտպանական կռիվներում։*

[10] Ա-Դո, *Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, Երեւան, 1907, էջ 363։*

սակայն փաստերը համադրելով՝ ակնհայտ է դառնում, որ խոսքը նոյեմբերի 30-ին Թուրքերի՝ Խաչիսարի վրա ձեռնարկած գլխավոր հարձակման մասին է։ Հ. Գեւորգյանը միանգամայն արժեքավոր վկայություն է բերում՝ շրջանառելով մի կարեւոր վավերագիր. «Մերոնք խմբապետ Մարտիրոս վարժապետի հմուտ ղեկավարութեամբ կուում են այնպէս, որ նրանց նախանձել կարող էին եւրոպական զօրերի շարքերում կռուած զինուորները.... թուրքերը երկրորդ անգամ են յարձակւում։ Դարձեալ ջարդւում են ու բոլորովին յետ նահանջում՝ թողնելով կռուի դաշտում շատ դիակներ»[11]։ *Այսպիսով, հայկական Խաչիսարի ինքնապաշտպանական ուժերը հասնում են անվիճելի, արժանի հաղթանակի՝ սեփական տունն անառիկ պահելով։ Հակառակորդը պարտություն է կրում եւ մարտադաշտում թողնելով բազմաթիվ զոհեր՝ գլխիկոր հեռանում մարտական անուրանալի ավանդույթներ ունեցող Խաչիսարի՝ այս տիրական եւ հպարտ հայկական գյուղի մատույցներից։*

Խաչիսարեցիներն առանց հապաղելու օգնության են հասնում հեռավոր Բարսում գյուղի բնակիչներին։ Ա-Դոն վկայում է 1905 թ. վերջին Թուրքերի հարձակման մասին. «...պաշարեցին Բարսումը, որը շնորհիւ իր ամուր դիրքերի ուժեղ դիմադրութիւն ցոյց տուեց եւ յետ քշեց յարձակումը։ Սակայն թուրքերը չը խրատուած այդ բանից, դեկտեմբերի 5-ին յարձակուեցին Բարսումի վրայ եւ հանդից քշեցին նախիրը, որի ժամանակ Խաչիսարից եկած զինուած մի խումբ երիտասարդներ, օգնութեան հասնելով, ոչ միայն նախիրը յետ խլեցին, այլ եւ հետեւելով թուրքերին մինչեւ Մալաֆլու գիւղը՝ կրակի կապեցին նրանց»[12]։ *Դեկտեմբերի 5-ին խաչիսարցիները միացյալ ուժերով Թուրքերին դուրս են շպրտում Բարսում գյուղից[13], ապա հետապնդում են նրանց, ներխուժում մերձակայքում գտնվող Թուրքական գյուղ եւ վերցնում զգալի ռազմավար։ 1906 թ. հունվարի 18-ին ձեռնարկվում է Թուրքերի վերջին հարձակումը Խաչիսարի վրա։ Այդ օրը Թշնամին դիրքեր է զբաղեցնում գյուղից 5 կմ հյուսիս-արեւելք՝ Սանգյար-Թափա կոչվող բլրի վրա, որն իշխող բարձունք էր եւ շրջապատի նկատմամբ ապահովում էր որոշակի առավելություն։ Սակայն Խաչիսարցիները, ժամանակին նկատելով Թուրքերի դիրքավորումները գյուղի մոտակա սարերի վրա, երկու կողմից գրոհում են եւ փոքրաթիվ ուժերով դուրս մղում*

---

[11] Հ. ԳԵՒՈՐԳՅԱՆ, *նշվ. աշխ.*, *էջ 288։*

[12] Ա.-ԴՈ, *Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում, էջ 341։*

[13] *Տե՛ս անդ։*

հակառակորդին գյուղի մատույցներից։ Այսպիսով, թուրքերը, տալով զգալի կորուստներ, արագ նահանջում են, իսկ խաչիսարցիներն ունենում են 1 սպանված եւ 2 վիրավոր[14]։

Հակառակորդը 1905 թ. նոյեմբերի 30-ի եւ 1906 թ. հարձակումները տանուլ է տալիս եւ անփառունակ պարտություն կրելով՝ նահանջում՝ իր հրոսակների դիակները թողնելով մարտադաշտում[15]։

Գյուղի մարտական տարեգրության մեջ ուշագրավ է նաեւ խաչիսարցիների գործուն մասնակցությունը հայաբնակ հեռավոր գավառների, շրջանների պաշտպանությանն ու հերոսական կռիվներին։ Արշակ Վիրաբյանի վկայությամբ՝ ռուսական առաջին հեղափոխության տարիներին գյուղի 26 կամավորների խումբը մեկնում է Արեւմտյան Հայաստան եւ մասնակցում Սասունի 1904 թ. հերոսամարտին։ Այդ հերոսական զորաջոկատի անդամներից 6-ը տուն չեն վերադառնում, իսկ խմբի ղեկավար Ղազար Մանասյանը նենգաբար սպանվում է Շամխորի մոտ դարանակալած թշնամու գնդակից[16]։

Դիտարժան է Խաչիսարից սերող ենթասպա, ապագա մարշալ Հովհաննես Բաղրամյանի կերպարը, որը գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանի գլխավորությամբ գործող հայկական կորպուսի կամավորական հատուկ դիվիզիայի շարքերում, որպես հեծյալ դասակի հրամանատար, մասնակցել է Սարդարապատում թուրքական զորքերի դեմ մղված մարտերին։ Այնուհետեւ Հովհաննես Բաղրամյանը ծառայության է անցել նոր ծնված Հայաստանի Հանրապետության զինված ուժերում՝ որպես հեծյալ գնդի հեծելավաշտի հրամանատար՝ իր մասնակցությունն ունենալով 1920 թ. սեպտեմբերին թուրքերի դեմ մղվող կռիվներում։

Հիշատակենք Խաչիսարի հերոսական տարեգրության եւս մեկ կարեւոր դրվագ Առաջին Հանրապետության օրերին։ Այդ ժամանակ նույնպես գյուղը գտնվում էր հայ ժողովրդի համար ճակատագրական իրադարձությունների կիզակետում։ Այս է վկայում ռազմաոստիկանական հետեւակային առաջին գնդի հրամանատար կապիտան Մնացականյանի 1919 թ. փետրվարի 5-ի զեկուցագիրը (թիվ 226)՝ ուղղված հայկական դիվիզիայի հրամանատարին, որում խոսվում է Ելիզավետպոլ-Գանձակի

---

[14] *Տե՛ս* Ա. Տերյան, *Պատմություն Հայոց Արեւելյան կողմի (Աղվանք, Գարդման, Ուտիք), Երեւան, 2015, էջ 311–312։*

[15] *Տե՛ս* Հ. Բաղրամյան, *Ջարդախլուի ֆենոմենը, «Հայկական բանակ», թ. 4, 1997, էջ 15, 77–80։*

[16] *Տե՛ս անդ, էջ 79։*

գավառի Զարդախլու գյուղի հայ բնակչության դժգոհության մասին՝ կապված թաթարների իրականացրած բռնի զորահավաքի հետ, որի նպատակը Հայկական լեռնաշխարհը հայերից մաքրելն էր՝ Գետաշենից մինչեւ Բաղաքենդ[17]։ Ավելին. ինչպես նշում է Բաքվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը կառավարությանն ուղղված 1920 թ. սեպտեմբերի 20-ի գաղտնի հեռագրում, Ադրբեջանի իշխանությունները, իրենց հանրապետության անբաժան մաս համարելով Զանգեզուրը, Ղարաբաղը, Շարուր-Նախիջեւանը, Սուրմալուն եւ հայկական այլ տարածքներ, զորակոչից չէին ազատում նաեւ իրենց երկրի տարբեր վայրերում հանգրվանած հայերին, ինչպես օրինակ՝ Գանձակի շրջանի Խաչիսար գյուղում ժամանակավոր բնակություն հաստատած թուրքահայ գաղթականներին[18]։

Խորհրդային կարգերի հաստատմամբ եւ Կարմիր բանակի առաջխաղացմամբ գյուղի վիճակը չի փոխվում եւ չի թեթեւանում, ինչը պայմանավորված էր ոչ հեռու Փառիսոսի ամրոցի ավերակների մոտ գտնվող նշանավոր Գետաբեկի պղնձաձուլական գործարանի նկատմամբ ունեցած հետաքրքրությամբ։ Հարկ է նշել, որ խորհրդային իշխանության հետապնդած տնտեսաքաղաքական շահերի պատճառով գյուղը դարձավ թուրք-թաթարների հարձակումների թիրախ։

Դա ակնհայտ երեւում է Գ. Կ. Օրջոնիկիձեի՝ 11-րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Վեսնիկի հետ ուղիղ հեռագրագծով խոսակցության 1920 թ. հունիսի 11-ի գրառումից։ Դրանում ուղղակիորեն նշվում է ինչպես Ղարաբաղում, այնպես եւ հայաբնակ այլ վայրերում, այսպես կոչված, «հակահեղափոխական ապստամբության» ճնշման անհրաժեշտության մասին. այդ «ապստամբությունը» ճնշելու իր պատրաստակամությունն էր հայտնել Հուսեյնովը՝ խոստանալով տրամադրել 200-ից ավելի հեծելակ։ Վերոնշյալ խոսակցության վերծանումից ակնհայտ է դառնում, որ Գ. Կ. Օրջոնիկիձեի համար առավել մեծ հետաքրքրություն էր ներկայացնում Զեգամ կայարանից ոչ հեռու գտնվող Զարդախլու գյուղի զինաթափումը, զավթումն ու վերագործարկումը Գետաբեկի պղնձաձուլարանի, որն այդ պահին իբրեւ թե գտնվում էր դաշնակցականների տնօրինության ներքո։ Արխիվային վավերագրերը

[17] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 151, թ. 90 հակ.։
[18] Տե՛ս անդ։

փաստում են[19], որ հանգամանքները խիստ անհարթ են դասավորվում, բայց գյուղի բնակիչները բոլորովին չէին պատրաստվում այդքան հեշտ ու հանգիստ հպատակվել ռազմաքաղաքական իրադարձությունների այդ անտրամաբանական ընթացքին եւ փորձում են դիմադրել, սակայն ուժերի չափազանց անհավասար լինելու պատճառով ի վերջո նահանջում են։ Գյուղը հպատակեցնելու խորհրդաադրբեջանական փորձերը շարունակական են դառնում։

Այսպես՝ 1920 թ. հուլիսի 11-ին Բաքվից 11-րդ Կարմիր բանակի հրամանատարին հասցեագրված հեռագրում Գ. Կ. Օրջոնիկիձեն շեշտում է, որ Շամխորի գավառի Զեգամ եւ Գետաբեկ կայարանների միջեւ գտնվող հակահեղափոխական Զարդախլու հայկական գյուղն անհրաժեշտ է անհապաղ զինաթափել, *ինչի համար հարկավոր է Ղազախի շրջանից ուղարկել 200 կարմիրբանակային եւ նույնքան հայ (վերջիններս գնալու էին Զեգամ կայարան եւ գտնվելու էին գավառային հեղկոմի տեղամասային կոմիսար Զյատովի տրամադրության տակ)[20]։ Խաչիսարցիները ոչ միայն չեն ընկճվում, այլեւ շարունակում են դիմադրել եւ նույնիսկ օգնում են հարեւան գյուղերին։*

Հերոսապատման փառապանծ տարեգրությունից եւս մեկ հատված։ Դեռեւս հայ-թուրքական ընդհարումների ժամանակ (1905—1907 թթ.) թուրք-թաթարները Խաչիսարից դեպի արեւմուտք (8 կմ հեռավորության վրա) գտնվող Աթաբեկ գյուղի մոլոկաններին դուրս են քշում իրենց բնակատեղից եւ հաստատվում այնտեղ, որը մինչ այդ հայկական բնակավայր էր։ Արդեն խորհրդային կարգերի ժամանակ, չերկնչելով հնարավոր բռնաճնշումներից, Խաչիսարի հերոս երիտասարդությունը 1924 թ. ապրիլին Աթաբեկ գյուղից դուրս է շպրտում թուրքերին։ Խաչիսարցի Հարություն Վիրաբյանը[21], որը դեռեւս 1915 թ. զորակոչվել էր ցարական Կովկասյան բանակ եւ իր ցանկությամբ ուղարկվել ռազմաճակատի առաջնագիծ, ծառայել Սարիղամիշում, զորացրվելուց հետո վերադարձել էր գյուղ, համախմբել երիտասարդությանը եւ կազմակերպել նրանց զինյալ պայքարը թուրքերի ոտնձգությունների դեմ։ Միաժամանակ գյուղը հայացնելու եւ վերաբնակեցնելու նպատակով՝ Հարություն

---

[19] *Տե՛ս* «Нагорный Карабах в 1918—1923 гг.», «Сборник документов и материалов»/отгв. ред. В. А. Микаелян, Ереван, 1992, *էջ 499։*

[20] *Տե՛ս անդ, էջ 531։*

[21] *Տե՛ս* Ա. Վիրաբյան, *Գիրք դարերի խորքից, Երեւան, 1998, էջ 128։*

Վիրաբյանը կազմակերպում է ավելի քան 50 հայ ընտանիքի տեղափոխությունը Խաչիսարից Աթաբեկ, որտեղ հայությունը վերստին արմատներ է գցում, ստեղծագործում եւ արարում է մինչեւ բռնի տեղահանումը հայրենի բնակավայրից[22]։

1987 թ. վերջին Խաչիսար գյուղում ծավալված իրադարձությունները, սակայն, ունենում են ծանր հետեւանքներ[23]։

Ադրբեջանի իշխանության իրագործած հայահալած-ջարդարարական քաղաքականությունը, Գանձակի, Շամխորի, Խանլարի եւ հայաբնակ այլ շրջանների բռնի հայաթափումը, նախճիրը անասելի ծանր հետեւանքներ ունեցան։ Բրիտանացի հայտնի լրագրող, Կովկասի գծով մասնագետ Թոմաս Դե Վաալի կարծիքով՝ ողբերգական այդ իրադարձություններն սկսվեցին 1987 թ. հոկտեմբերին, երբ տեղի ադրբեջանական իշխանությունների եւ Ադրբեջանի հյուսիսում գտնվող հռչակավոր Զարդախլու գյուղի հայ բնակիչների միջեւ տեղի ունեցավ բախում[24]։ Խաչիսարի բնակչության ջարդի կազմակերպիչն անձամբ Շամխորի շրջանի առաջին քարտուղար Մ. Ասադովն էր[25]։ 1987 թ. Զարդախլու գյուղում բռնկված ադրբեջանահայկական բախումն ազդակ դարձավ 1988 թ. Ադրբեջանի հայաբնակ վայրերից հայության զանգվածային բռնագաղթի համար։ Ինչպես դիպուկ նկատել է Ալեքսեյ Զվերեւը, ԼՂԻՄ-ի հյուսիսարեւմուտքում գտնվող Խաչիսար գյուղի հայերի նկատմամբ 1987 թ. վերջին ադրբեջանական իշխանությունների իրագործած բռնություններն ու ջարդը 1988 թ. առավել սարսափելի իրադարձությունների նախերգանքը եղան[26]։ Թե ինչու Ադրբեջանական ԽՍՀ-ի՝ ներկայիս Ադրբեջանի Հանրապետության հայաբնակ վայրերից բնիկ հայ ազգաբնակչությունը

---

[22] *Տե՛ս անդ։*

[23] *Տե՛ս* L. Chorbajian, P. Donabedian, C. Mutafian, The Caucasian Knot. The History of Nagorno-Karabagh (Politics in Contemprory Asia), London-New Jersey. Zed books, 1994, *էջ 148։*

[24] *Տե՛ս* T. де Ваал, Черный сад. Армения и Азербайджан между миром и войной: https:// www.kavkaz-uzel.eu/system/uploads/article_attachment/attach/0002/24358/Chernyy_sad. _Armeniya_i_Azerbaydzhan_mezhdu_mirom_i_voynoy.pdf. *ներբեռնման օրը՝ 06.06.2020 թ.։* T. De Waal, Black Garden, Armenia and Azerbaijan through Peace and War, New York University Press, New York and London, 2003, *էջ 18։*

[25] *Տե՛ս* Л. Рычкова, Межнациональные отношения в СССР в 1985—1991 гг. (исторический и учебно-методический аспект), Екатеринбург, 2018, *էջ 68.* http://elar.uspu.ru/bitstream/uspu/9672/2/Rychkova.pdf. *ներբեռնման օրը՝ 06.06.2020 թ.։*

[26] *Տե՛ս* А. Зверев, Этнические конфликты на Кавказе,1988—1994 г. http://poli.vub.ac.be/publi/ContBorders/rus/ch0102.htm: https://www.vub.be/sites/vub/files/nieuws/users/bcoppiet/139glava_i.pdf, *ներբեռնման օրը՝ 15.06.2020 թ.։*

«հանկարծակի» *արտագաղթեց Հայաստանի Հանրապետություն, հարկավոր է դեռ ամենայն անաչառությամբ եւ մանրամասնությամբ բացահայտել։ Իրագործվեց ցեղասպանություն՝ հայ ազգաբնակչության բռնի տեղահանում հարազատ բնակավայրերից, ինչը դատապարտվում է միջազգային բոլոր օրենքներով, ՄԱԿ-ի 1948 թ. հիմնարար կոնվենցիայով*[27]։

Այս իրողություններն իրենց փտած գաղափարական եւ աղավաղված գործնական հիմնավորումը գտան նույնիսկ Հայաստանի Հանրապետության մտավորականության մի շարք ներկայացուցիչների անպատասխանատու, քաղաքական առումով միանգամայն անհեռանկարային եւ անհաշվենկատ, հակապատմագիտական հրապարակումներում, մամլո ելույթներում։ Գրող Վարդգես Պետրոսյանը «Խորհրդային Հայաստան» թերթի 1989 թ. օգոստոսի 17-ի համարում հրապարակեց մի հոդված՝ «Վերաբնակի՞չ..., փախստակա՞ն..., գաղթակա՞ն..., հայրենադա՞ռն» *վերնագրով, որը բառի բուն իմաստով պատմական իրողություններն ու քաղաքական երեւույթները նենգափոխելու շատ կոպիտ եւ պատիվ չբերող փորձ է։ Ավելին՝ այն խիստ հակագիտական բնույթ եւ ուղղվածություն ունի, որը խախտում է դասական ավանդույթները եւ նենգափոխում հայագիտության մեջ արդեն վաղուց քաղաքացիություն ստացած տեսակետներն ու հայեցակարգերը։ Պատմագիտական եզրույթների քաղաքական խեղաթյուրման միջոցով հեղինակն այդ հոդվածում փորձել է հավասարության նշան դնել* «գաղթական» *եւ* «հայրենադարձ» *հիմնարար հասկացությունների միջեւ ու դեռ հանդիսավոր սնապարծությամբ նշել, որ հարազատ բնակավայրերից հայ ազգաբնակչության տեղաշարժը* «...պիտի լիներ նաեւ՝ անկախ Լեռնային Ղարաբաղի դեպքերից։ Նրանք պիտի գային-լցվեին Հայաստան...», *եւ այդ երեւույթը որակել է որպես* «հայրենադարձություն»[28]։ *Վ. Պետրոսյանը, անտեսելով պատմաքաղաքական կարեւոր ու ծանրակշիռ հանգամանքը, որ, ինչպես ինքն է ընդգծում,* «նրանց (իմա՛ հայերի) պապերը-նախապապերն են ապրել այդ վայրերում, ապրել են անհիշելի ժամանակներից, եւ նրանք շատ ավելի էին բնիկներ, քան քարտեզի այսօրվա տերերը», *կամ՝* «իրենց ժողովրդի (իմա՛ հայերի) պատմական հայրենիքն էր քարտեզի այսօրվա տերերի աշխարհ գալուց շատ հարյուրամյակներ առաջ», *հայ բռնագաղթյալներին միանգամայն անհիմն ու անտեղի համարում է* հայրենադարձներ[29]։ *Այս հրապարակումը, թերեւս,*

---

[27] *Տե՛ս «Հայոց պատմության հիմնահարցեր», Երեւան, 2000, էջ 442–443։*

[28] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 17 հուլիսի 1989 թ. Երեւան։*

[29] *Տե՛ս անդ։*

քաղաքական վտանգավոր ապակողմնորոշման եւ թյուրըմբռնման տեղիք է տվել։

Ադրբեջանական իշխանության իրականացրած բռնագաղթի հետեւանքով հայրենի բնակավայրերը լքեց ավելի քան 213 հազար հայ կամ շուրջ 56 հազար ընտանիք[30], որոնց թիվը հետագայում զգալիորեն ավելացավ[31]։ Նրանց նյութական որոշակի օգնություն ցուցաբերվեց, ստեղծվեցին համապատասխան պայմաններ, եւ կարծես թե մոռացության մատնվեց, որ Զարդախլուում եւ հայկական մյուս բնակավայրերում հայերի նախնիներն ապրել են հարյուրամյակներ, հազարամյակներ *առաջ։ Բացասական այս երեւույթը շարունակվում է առ այսօր՝ աղավաղելով պատմաքաղաքական գործընթացների իրական բովանդակությունը եւ բացառելով դրանց զարգացման նպատակահարմար եւ առավել հեռանկարային տարբերակների ընտրությունը։ Այսօր եւս ադրբեջանցի պատմաբաններն ու քաղաքագետները լծված են Սյունիք-Արցախի եւ Ուտիքի հին ու նորագույն պատմության, Հայոց ազատամարտի ուտիք-արցախյան էջերի կոպիտ եւ անթաքույց նենգափոխման գործին[32]։*

РЕЗЮМЕ

Во время армяно-татарских столкновений 1915—1906 гг. Хачисар был в составе Елизаветпольского уезда Елизаветпольской губернии. Армяне Хачасара со своей неведанной храбростью и боевой самоотверженностью отличилось во время армяно-татарских стычек.

По преданию, на горе Хачасар был большой колокол, с помощью которого армяне окрестных сел всегда предупреждались о нападках врагов. Решаюшое

---

[30] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 19 սեպտեմբերի 1989 թ.։*

[31] *Տե՛ս անդ, 19—20 սեպտեմբերի 1989 թ. եւ հջ.։*

[32] *Այս մասին առավել մանրամասն տե՛ս* Nazim Mustafa, Azərbaycan Xalq Cümhuriyyəti işığında (1918—1920) Bakı," ULU", 2018, 268 səh. Назим Мустафа, Процесс объединения Нахиджевана и Азербайджан в Зенгезуре в Армении — 11.12.2019. Блог №: 2019/69: https://avim.org.tr/Blog/NAHCIVAN-ILE-AZERBAYCAN -I-BIRBIRINDEN-AYIRMAK-UZERE-TERTIPLENEN-ZENGEZUR-UN-ERMENISTAN-A-KATILMA-SURECI-11—12—2019. Dr. Nazim Mustafa, Azerbaycan Cumhurbaşkanlığı Kütüphanesi Bölüm Başkanı, pp. 1—18: Blog No: 69 11.12.2019. Назим Мустафа, Азербайджанская Демократическая Республика: яркая страница в истории государственности Азербайджана. Материалы международной конференции, 26—30 июня 1918 г., с. 400—403. Dr. Nazim Mustafa, Azerbaycan Cumhurbaşkanlığı Kütüphanesi Bölüm Başkanı, Blog No: *69. Նեբեռնման օրը՝ 16. 06. 2020։*

татаро-турецкое нападение на село Хачисар произошло 30 ноября 1905 года, которое, однако, сильным ударом было отброшено назад. Враг был отброшен с подступов Хачисара, а хачисарцы подоспели на помощь сельчан далекого горного армянского села Барсум и других поселений. В боях с 30 ноября 1905 г. по 1906 г. противник потерпел катастрофическое бесславное поражение и отступил, оставляя на поле боя трупы своих разбойничавших солдат.

В боевой истории села примечательна также участие хачасарцев в защите и героических сражениях далеких армянонаселенных сел Армении. По свидетельству Аршака Вирабяна, в годы Первой русской революции во главе жителя села Хачисар Казара Манасяна 26 хачасарцев-добровольцев ушли в Западную Армению и приняли активное участие в героическом сражении Сасуна 1904 г. против турецкого владычества.

Еще в 1905—1907 гг. во время спровоцированных царскими властями межнациональных стычек турко-татары выгнали молокан из находившихся на 8 километрах западнее Хачисара села Атабек, а сами укрепились в ней. Однако неожиданно события приняли непредсказуемый ход. В апреле 1924 года молодежь героического Хачисара во главе старейших стремительно выгоняют турок из этого села, а хачисарец Арутюн Вирабян, который еще в 1915 г. был призван в царскую Кавказскую армию и по своему желанию самовольно отправлен в передовую фронтовую линию, послужив в Сарыкамише, после демобилизации из армии возвращается в родное село и сплотив молодежь села, организует борьбу против турецких бесчинств, создает большую семью и в конце концов становится председателем колхоза этого села, завоевывая большой авторитет даже среди турок. Одновременно с целью армянизации и переселения села Арутюн Вирабян организовывает переселение более чем 50 семей из Хачисара в Атабек, где армянство заново бросает корни до насильственной депортации с родного поселения, с чем и завершается политика микрогеноцида армянских сел Хачисар, Атабек и многих других армянских сел.

SUMMARY

During the Armenian-Tatar clashes of 1905—1906, Khachisar was part of Elizavetpol district of Elizavetpol province. The Armenians of Khachisar, with their incomparable courage and fighting dedication, distinguished themselves during the Armenian-Tatar clashes.

According to the tradition, there was a large bell on Mount Khachisar, with the help of which the Armenians of the neighboring villages were always warned of enemy attacks. The decisive Tatar-Turkish attack on the village of Khachisar took place on November 30, 1905, which, however, was thrown back with a strong blow. The brave residents of the village of Khachisar not only hindered the enemy from entering Khachisar, but also were in time to help the villagers of the distant mountainous Armenian village of Barsum and other villages. The enemy was ingloriously defeated in the battles of November 1905 and of 1906 and retreated, leaving the corpses of his robbed soldiers on the battlefield.

In the martial history of the village, the participation of the Khachisar residents in the defense and heroic battles of the distant villages of Armenia is also remarkable. According to Arshak Virabyan, during the years of the First Russian Revolution of 1905—1907, 26 volunteers from Khachisar led by the village head Ghazar Manasyan, left for Western Armenia and actively took part in the heroic battle of Sassoon in 1904 against the Turkish rule.

Back in 1905—1907, during the interethnic clashes provoked by the tsarist authorities, the Turkish Tatars drove the Molokans out of Atabek village, located 8 kilometers west of Khachisar, forcing them to leave, and they themselves settled down there. However, unexpectedly, events took an unpredictable course. In April 1924: the youth of the heroic Khachisar, led by the elders, resolutely threw the Turks out of the village, and Harutyun Virabyan from Khachisar, who in 1915 was enlisted in the tsarist Caucasian army and voluntarily went to the front line serving in Sarıkamıish, returned to his native village after the mobilization of the army and by getting together the youth of the village, organized a struggle against Turkish atrocities, created a big family and eventually became the chairman of the collective farm of this village, enjoying great authority even among the Turks. Simultaneously, with the aim of Armenization and resettlement of the village, Harutyun Virabyan organized the resettlement of more than 50 families from Khachisar to Atabek, where the Armenians re-settled, lived and created like before their forced deportation from their homeland, which put an end to the policy of micro-genocide of the Armenian villages of Khachisar, Atabek and numerous other villages.